Ծնվել է 1964 թվականին, Երևան քաղաքում:

Կրթություն

1981 թվականից մինչև 1987 թվականը սովորել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետում:
ՀՀ կառավարությանն առընթեր Բարձրագույն որակավորման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Աշխատանքային փորձ

1981 թվականից մինչև 1984 թվականն աշխատել է Երևանի 26 Կոմիսարների շրջանի ժողդատարանում՝ որպես թարգմանիչ:
1984 թվականից մինչև 1989 թվականն աշխատել է «Ավտոտեխսպասարկում» հանրապետական բազայում՝ որպես իրավախորհրդատու:
1989 թվականից մինչև 1991 թվականը հանդիսացել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների կոլեգիայի անդամ, միաժամանակ պայմանագրային կարգով զբաղեցրել է ավագ խորհրդատուի պաշտոնը, սպասարկել է Հայաստանի Հանրապետության առևտրի նախարարության Աբովյանի քաղաքի մասնաճյուղը:
1991 թվականից մինչև 1999 թվականը զբաղեցրել է Երևան քաղաքի Սպանդարյանի շրջանի ժողդատարանի դատավորի պաշտոնը:
1999 թվականից մինչև 2009 թվականը զբաղեցրել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի նախագահի պաշտոնը:
ՀՀ Նախագահի 2009 թվականի հունվարի 15-ի հրամանագրով նշանակվել է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր:
Դասախոսում է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում:
2020 թվականի հուլիսի 31-ին Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրվել է Դատավորների

ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամ՝ 4 տարի ժամկետով:

Այլ տեղեկություններ

ՀՀ Նախագահի 2011 թվականի սեպտեմբերի 3-ի հրամանագրով պարգևատրվել է Մխիթար Գոշի անվան մեդալով: